

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ֆ Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ֆ Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒ

ՄՇԱԿ

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՐԻ

«Մշակ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., վեց ամսականը՝ 7 ռ., հինգ ամսականը՝ 6 ռ., չորս ամսականը՝ 5 ռ., երեք ամսականը՝ 4 ռ., երկու ամսականը՝ 3 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բաղարայան և Բարձրակապ փողոցն. անկիւն):
Ուրիշ քաղաքներից պէտք է դիմել այս հասցեով. ТИФЛИСЪ, редакция „Мшакъ“, իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „Mschak“.

Ցայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Ձգագումների հետեւանքը. Ոչ յաղթողը և ոչ յաղթվողը. — ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆինանսական հոգեվարք. Կայսրուհի Նիկոլայեթ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՆՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սիօնիզմ. Ռաշիզմ:

ՁԳԱԳՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՒԱՆՔԸ

Կրետէ կղզում նորից ծագեց ապստամբութիւն. մարդկային արիւնը նորից սկսեց թափվել. ֆանատիկները նորից գրչուկ բարձրացրին: Այն մահաբերականները, որոնք ամբողջ դարերից հարստացանք, ճնշել են կղզու քրիստոնեայ բնակիչներին, ստրկութեան մէջ պահել նրանց, այսօր՝ երբ քրիստոնեաներին տրվում է իրանց հետ հաւասար իրաւունք, երբ նրանց գոյքը, կեանքը, պատիւը երաշխաւորվում է:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԻՕՆԻԶՄ

Մենք արդէն հաղորդեցինք, որ Նիկիթարիայի Բաղէլ քաղաքում գումարովեց սիօնիստների մեծ ժողովը, որին ներկայ էին աշխարհի բոլոր կողմերից եկած պատգամաւորներ: Այժմ աւելորդ չենք համարում մի քանի մանրամասնութիւններ առաջ բերել այդ շարժման մասին, որ անշուշտ մի շատ նշանակաւոր երևոյթ է կազմում հրէական կեանքի մէջ:

Անցեալ տարեկան ընդհանուր ժողովից յետոյ, որ նորից տեղի ունեցաւ Բաղէլում, սիօնիզմը առաջադիմութեան ահալին քայլեր է արել: Ինչպէս յայտնի է, սիօնիստների գլխաւոր բաղձանքն է աշխարհի չորս կողմում ցրված հրէաներին ուղղել դէպի հին Տայրեիկը, դէպի Պալեստինա: Այդ միտքը բոլոր հրէաների համակրութիւնը չէ վայելում. ամեն մի հրէայ սիօնիստ չէ, ուստի հարկաւոր է համարվում պրօպագանդա անել, ժողովրդացնել հայրենիք վերադառնալու միտքը, հաստատել հրէաների մէջ այն համոզմունքը, թէ այդ մտքից դուրս հրէութիւնը ոչ մի փրկութեան միջոց չէ կարող գտնել:

Սիօնիստ է համարվում ամեն մի հրէայ, որ ընդհանուր գործի գանձին տալիս է 1 ֆրանկ: Այդ վճարը իրաւունք է տալիս նրան մասնակցել պատգամաւորների ընտրութեան, որոնք ընդհանուր ժողովներ են կազմում գործին ուղղութիւն տալու համար: Սիօնիստների շարժումը մեծ չափեր է ընդունել մանաւանդ Անգլիայում, Աւստրիայում, Բուլղարիայում և Ամերիկայում: Անգլիայում տեղի ունեցած մի ընդհանուր ժողովին ներկայ էին Անգլիայի սիօնիստական խմբերի 140 ներկայացուցիչներ: Աւստրիայում հրէական

ւորող օրէնքներ են մտցնում, ապստամբութեամբ են, բողոքում են և դէպքեր ձեռքին պաշտպանում իրանց ապօրինի բողոքը:

Եւ որտեղից է ծագում մահաբերական ամբոխի այդ յանդգնութիւնը. ի՞նչն է խրատուում նրան դիմադրել եւրօպական պետութիւններին. ի՞նչն է նրա մէջ յոյսեր ներշնչում: Մեր կարծիքով, մահաբերական ամբոխի մէջ անմիտ յոյսեր ներշնչողը, նրան խրատուողը ձգձգման քաղաքականութիւնն է, որին հետեւում են մեծ պետութիւնները՝ արմատական կերպով չը լուծելով կրեական հարցը և պալլիատիվ միջոցների դիմելով: Դառն փորձը և անհրաժեշտ փաստերն ապացուցել են, որ Կրետէ կղզին երբեք չէ կարող խաղաղվել, մինչև թիւրքաց զորքերը և բաշիբազուկները չը հեռանան այնտեղից: Սակայն ամբողջ երկու տարի ոչ մի վճռական միջոց չը գործարկվեց այդ միտքն իրագործելու համար, ոչ էլ հաստատ, ոչ

շարժման միացել է երիտասարդութիւնը: Միայն Վիեննայի ուսանողական ընկերակցութեան մէջ կան 500 անդամներ: Վիեննայի և Կրակովի համալսարանների սե տախտակների վրա կառված են նրանց կոչերը, որոնց մէջ, ի միջի այլոց, ասված է հետեւելով. «Մենք հրէականութեան մէջ չենք տեսնում մի մեռնող օրգանիզմ, որ պիտի ձուլվի ստորաքարշ ասիմիլացիայի մէջ: Մենք խօսք ենք տալիս ի ցոյց հանել մեր գոյութիւնը, որպէս զի իմաց տանք, թէ ի՞նչ է զգում և մտածում հրէական ազգային երիտասարդութիւնը: Մենք հրէաներ ենք և զգում ենք մեզ հրէայ: Մենք համոզված ենք, որ ոչ մի արհեստական շարժում չէ կարող վերջ դնել մեր երկու հազարամեայ հաւատակութեան... Մենք ցանկանում ենք մեր ժողովրդի վերածնութիւնը նրա սեփական հողի վրա: Միթէ մեր համաքաղաքացիները պիտի յանդիմանեն մեզ դրա համար: Միթէ դրա համար չեն նրանք սովորեցրել մեզ մեր պատմութիւնը, որ մենք իմանանք, թէ ի՞նչ պէտք է կռվել ազատութեան համար»:

Բացի քաղաքական պրօպագանդայից, սիօնիստները շատ աշխատել են ժողովրդի կուլտուրական վերածնութեան և ամբոխի մտաւոր մակերկրային բարձրացնելու համար: Հիմնվել են դպրոցներ, ժողովրդական դաստիարակչութիւններ, բացվել են ընթերցարաններ և գրադարաններ, հրատարակվում են ժողովրդական գրքեր և պոէզիա: Առանձին ուշադրութիւն է դարձրած նոր հրէական գրականութեան վրա: Կազմվել են հրատարակչական գործեր, որոնք նպատակ են դրել հրէական լեզուով մի հարուստ, կենդանի գրականութիւն ստեղծել՝ հրատարակելով թարգմանելով եւրօպական գրականութեան լաւագոյն գործերը, տպելով ժողովածուներ և պարբերական հրատարակութիւններ: Հրէական լրագրներ և ամսագրներ այժմ լոյս են տեսնում Նիւ-Եօրկում, Չիկագոյում, Լոնդոնում, Բեռլինում, Պետերբուրգում, Վարշավայում, Եւրպայում, Կրակովում և Երուսաղէմում: Եւրօպա-

րոշ, ամուր կառավարութիւն ստեղծվեց կղզում: Գիօրգի իշխանի կանդիտատութիւնը՝ սուլթանի յամառութեան շնորհիւ, մինչև այսօր ենթադրութիւնների սահմանից դուրս չեկաւ: Կղզու կառավարութիւնը մի կողմից գտնվում է թիւրք փաշայի ձեռքում, միւս կողմից ժամանակաւոր կոմիտէի ձեռքում, որը, չունենալով ոչ զօրք, ոչ ժանդարմերի, ոչ ոստիկանութիւն, միայն անուանապէս է կառավարում կղզին:

Այդպէս է միշտ անորոշ, անհաստատ և ձգձգումների վրա հիմնված քաղաքականութեան արդիւնքը: Միայն վճռական գործունէութիւնը և վճռական քայլը կարող է խաղաղութիւն հաստատել Կրետէ կղզում, որ թիւրքաց ինտրիգների ապարկ է դարձել:

Ո՛Յ ՅԱՂԹՈՂԸ ԵՒ ՈՅ ՅԱՂԹՈՂԸ

Իտալական յայտնի պրօֆէսոր Չեզարէ Լամբրոզո ուսուց «Журналъ Журналовъ» հրատարակութեան մէջ դետեղել է մի յօդուած ամերիկական յաղթութեան հետեւանքների մասին: Լամբրոզո այն կարծիքն է յայտնում, որ պատերազմները, շատ քիչ բացառութեամբ, միշտ վնասակար են եղել թէ՛ զենքերի և թէ՛ յաղթողի համար: Թի շարք պատմական վկայութիւններով նա աշխատում է ապացուցանել, որ Հին Աւեստիայի և Գեոլոգիայի նման հարուստ, ուժեղ և ազատ ինքնավարական կառավարութիւններն ինչպէս և ոչնչացան շնորհիւ միայն այն հանգամանքի, որ գրավվեցին նուազաւնէր իր փառքով և զարգացրին իրանց մէջ զինուորական կարգերը և ոգին: «Վուրա-ցած իրանց յաղթութիւններից՝ այդ ինչ-

կան և ամերիկական շատ քաղաքներում կազմակերպվել են ընկերութիւններ և կուլտուր, որ բացառապէս հրէական լեզուով են խօսում: Ամերիկայում սկսել են բաց անել ժողովրդական ձրի դպրոցներ, որոնց մէջ դաստանդութիւնը Պալեստինայում դրութիւն ունեցող դպրոցների օրինակով պիտի լինի հրէական լեզուով: Այդ բոլոր ընկերութիւնների և դպրոցների նպատակն է ոչնչացնել տեղական բարբառները և հրէական լեզուն դարձնել կենդանի խօսակցութեան լեզու, որ միացնէր ամբողջ հրէութիւնը: Այդ նպատակը Պալեստինայում մասամբ իրագործված է: Ներկայումս զանազան լեզուներով հրատարակվում են մօտ 50 սիօնիստական լրագրներ: Լոյս են տեսել նաև բազմաթիւ գրքեր, որոնք խօսում են սիօնիզմի մասին գիտական և վիպական ձևերի տակ: Կան և շատ քրիստոնեայ համակրողներ: Հրէական յայտնի գրող և գործիչ Հէրցլ ասում է. «Սիօնիզմը տարածվում է այնպիսի արագութեամբ և ոյժով, ինչպէս գուցէ չէ տարածվել ոչ մի այսպիսի շարժում: Երբ սիօնիստը գիտում է Ներօնիստի կամ Սիօնիկի որ և է քաղաք, այնտեղ միջոցներ և ձեռք համարեա մի և նոյնն են, ինչպէս և իր բնակութեան տեղում: Կան այժմ հրէասէրներ, որոնք ինչ որ առանձին գեղեցիկ բան են տեսնում այն հանգամանքի մէջ, որ հին ազգը՝ բազմաթիւ զորքեր ամենաառաջին հարկաւորների ենթարկվելուց յետոյ, զգում է իր մէջ մի սքանչելի ոյժ՝ յառելու իր հայեացքը դէպի իր հայրենիքը»:

Սիօնիստների շարժման աւելի ևս նպաստելու և ապագայի համար ծրարելու կազմելու համար էր, որ օգոստոսի 16, 17 և 18-ին կայացաւ Բաղէլի երկրորդ ժողովը: Հաւաքվել էին 380 պատուիրակներ և 500-ից աւել հիւրեր: Առաւօտեան ժամի 9 1/2-ին, դիմօր Հէրցլ բաց արաւ ժողովը մի ողջունի ճառով: Նա ասաց. «Սիօնիստների առաջին ժողովը հրէական զարթնած ինքնաճանաչութեան մի ցոյց էր: Կար մի ինչ-

նախարարութիւններ մոռացան, ասում է Լամբրոզո, այն հիմունքները, որոնցով իրանք ամուր էին և ուժեղ, այն է՝ համերաշխութեան, ազատութեան և առեւտրի զարգացում: Որքան աւելի էր մեծանում նրանց զինուորական փառքը, այնքան աւելի էր նուազանում նրանց ազատութիւնը, այնքան աւելի էին սահմանափակվում ինքնավարական օրէնքները, մեծանում ծախքերը և նրանց համեմատ էլ բարդվում էին ժողովրդի հարկերը: Համարելով այդ երևոյթն ընդհանուր և անխուսափելի, Լամբրոզո աշխատում է նախատեսել ապագայ անցքերը և նախագուշակել Սպանիայի զինվոր գալիք փորձանքները և Ամերիկայի մեծ հանրապետութեան մէջ լինելի փոփոխութիւնները: Սպանիան կորցրեց իր նաւատորմը և իր կոլոնիաները: Նա չունի հաստատ կառավարութիւն և մի և նոյն ժամանակ առաջադիմութեան շաւղի վրա չէ գտնվում, ուստի նրան սպառնում է յեղափոխութիւն, որ կը ցնցի երկիրը, բայց անկարող կը լինի նրան փրկել: Մի կառավարութեան կը հրաւերի միւսը՝ բաւարարութիւն չը տալով ազգին, իսկ ֆինանսական սնանկութիւնը կը լրացնի պակասը: Վերջիվերջոյ պետութիւնների շարքից դէն կը շարժվի լատինական ազգը մեծ ներկայացուցիչներից մէկը, որ պատմութեան մէջ այնքան մեծ դեր է խաղացել: Սպանիայի յաղթողը՝ Ամերիկան, ըստ երևոյթին, վնաս չի կրել, այլ մեծ փառք և ոյժ ձեռք կը բերի, սակայն, իտալացի մտածողի կարծիքով, նա էլ վնաս կունենայ, թէև ոչ շուտ նկատելի: «Յաղթութիւնը կը բազմացնի միլիտարիզմի կուսակիցներին, որոնք գոյութիւն ունեն սաղմային դրութեան մէջ, նոյն իսկ ամենա-

որ անհատականաւ բան հրէական այս նոր շարժման մէջ, որովհետեւ հրէաները մեռած ազգ էին համարվում: Բայց մահը վերջ է դնում տանջանքներին, այն ինչ մենք տանջվում ենք, հետեւաբար՝ մենք գոյութիւն ունենք: Մեզ վրա թափվեցան մեղադրանքներ, մանաւանդ օտարութիւն է այն, որ ամենախիստ դիմադրութեան մենք հանդիպում ենք հրէաների մէջ: Նրանք, որոնք աղօթում են Սիօնի համար, շարժվում են Սիօնի դէմ: Բայց ժողովրդի լայն խաւերը մեզ հետ են: Ժողովրդական ինքնաճանաչութիւնն ուժեղացել է, և ինքնաճանաչութեանը միացել է նաև կամքը: Այժմ մեր ամենամօտիկ նպատակն է վերջնականապէս նուաճել հրէական համայնքները: Դրա ամենալաւ միջոցը՝ ընտրողական թերթիւն է: Մեզ յանդիմանում են, որ քրիստոնեայ սիօնիստների բարեկամութիւնը ենք վայելում: Մենք անդրադուրեւ ենք մեր հրէական մէջ, բայց ջերմապէս շնորհակալ ենք ամեն մի համակրութեան համար, որը հարկաւոր է մեզ մեր նպատակներին հասնելու: Հրէական հարցը լուծված չէ և դրա մէջ վտանգ կայ ազգերի խաղաղութեան համար: Մեզ հարկաւոր է սեփական անկիւնը, և այդպիսի անկիւն կարող է դառնալ միայն այն երկիրը, որի հետ մենք կապված ենք անխզելի կապերով: Մենք հաւատում ենք, որ Արեւելքի այդ ամայի անկիւնը միայն անցեալ չունի, այլ և ապագայ ունի: Մենք կարող ենք ծաղկեցնել և վերածնել Պալեստինան: Մենք չենք ուզում զաղրանալով այնտեղ գաղթականներ ուղարկել, մենք ուզում ենք գործել բացարձակ կերպով, հրէական գաղթականական բանկի միջոցով: Կարեւոր է մանաւանդ այն, որ սիօնիզմը հրէաներին խմբում է իդէալի շուրջը: Այդ բանը համակրանք է պատճառում դէպի մեզ նոյն իսկ ոչ-հրէաների մէջ»:

Յայտնի գրող Մաքս Նորդաու՝ որին ժողովը ընդունեց աղմկալի, օգնեցած աղաղակներով և ծափահարութիւններով, կարողաց զեկուցում հրէաների դրութեան մասին վերջին դարում:

բաղադրակիրը երկրորդն էր Նոր կառավարությունը կը ձգտի արկածները ետևից ընկնել, նուաճումների հաճոյքը կը մեծանայ: Իսկ այդ բոլորը կարող է նոյն իսկ ամենախաղաղակց, ամենաարդիւնաբեր ժողովրդի մէջ զարգացնել ձգտումն՝ դէպի նուաճումները, դէպի տիրապետութիւն: Իսկ բաւական է, որ մի ազգ մի անգամ ընկնի այդ խախտող շաւղի վրա, նա այնուհետեւ դժուարութեամբ յետ կը կանգնի: Կայ սակայն մի հանգամանք, որ կարող է ազատ պահել Ամերիկային ենթադրած վտանգից: Դա այն է, որ նա չունի գինեւորական արագիցիւններ, հին նուաճումների և տիրապետութիւնների աւանդութիւններ: Նա արդիւնաբերական երկիր է, միայն անհրաժեշտութիւնը պահանջած քաղէին նա իր արդիւնաբերական մեծ տաղանդը ուղղեց դէպի պատերազմական զորքեր և ապացուցեց, որ առանց մշտական զօրքի և գինեւորական դասակարգի նա կարող է յաղթել...

Մենք կարող ենք աւելացնել և մի հանգամանք, որ մեծ նշանակութիւն ունի ներկայիս: Դեպքում Դա այն է, որ ամերիկական պատերազմի շարժառիթը ոչ նուաճումներն էին և ոչ գինեւորական ոգուն բաւարարութիւն տալը: Դա անհրաժեշտութիւն դարձած մի բոլոր էր, որ յայտնեց ամերիկական ազգը՝ դժբաղդ կուբացիների թշուառութեան վերջ դնելու համար: Եթէ մարդկութիւնը չունենայ ամերիկացիների նման բողոքողներ, այն ժամանակ բռնութիւնը կը դառնայ անսանձ, ոչ մի հայածանք չի զսպի իր սաղմի մէջ: Ցանկալի է, որ այդ տեսակ բողոքի սպառնալիքը կարողանայ այսուհետեւ առանց դէպքի կանգնացնել ամեն մի անարդարութիւն և լուծել միջազգային ծանրակշիռ խնդիրներ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՐԱԿՐԻՈՒԹԱՆ

Էջմիածին, օգոստոսի 13-ին
«Մշակ» լրագրի 140-րդ համարում՝ Էջմիածնից հաղորդված լուրը՝ Սուրբաս արքեպիսկոպոսի ջոր ծախելու առիթով, այսպիսի կերպարանք է ստացել, որ ստույգ իրողութիւնից հեռու է: Հաւատարմ կերպով խոսելու այն է: Ամեն տարի գրեթէ Արարատի դպրոցում՝ ցորենի հունձներից յետոյ, ջրերը պակասում են: Էջմիածինը՝ Վաղարշապատի դաւառակի ամբողջ ջրի վրա պատմական հաւաստիքներով իրաւունք ունի: Այդ հիման վրա Վաղարշապատի ջուրը հաւասար կէսն

Իրութիւնը ոչ մի տեղ չը բարձրացնէ, շատ տեղերում նոյն իսկ աւելի վատացաւ: Առնաբա՛նը արտաքինի գոյներով նկարագրեց հրէաների դրութիւնը Բուսիսիայում, Գալիսիայում և ուրիշ տեղերում, որ նրանք վերջին ժամանակներս ենթարկվել են սատարի հայաւանդների և հարստութեամբ լիւններին: Այդպէս անցաւ Փրանսիայում ապրող հրէաների դրութեան: «Դէպի հրէաները ունեցած թշնամութեան բռնկումը առաջ ընկեց Իրէֆուսի գործը, ասաց նա: Ժողովն առիթ չունի զբաղվելու այդ գործով: Դա ֆրանսիական ժողովրդի գործն է և ոչ թէ հրէական ժողովրդի: Միայն այդ գործից առաջացած հետեւանդներն են վերաբերում հրէաներին: Փրանսիացիներն մեծ մասը հաւատում է այն վրդովեցուցիչ դատանցանքներին, որ տարածուած են հակառակմանը հրէական Իրէֆուսի սնդիկատի մասին: Հակառակման վրդովեցումն էր հետ մենք բանավոր չենք գրում: Հակասէ՛ միաները կարող են մեզ սպանել, ուր նրանք ֆիզիքապէս մեզանից ուժեղ են, բայց բարձրա՛նալ մեր դէպի նրանց ունեցած արհամարհանքը՝ նրանք չեն կարող: Իսկ ագնիւ, բայց խաբարով ֆրանսիացիներին մենք պիտի ասենք, որ սնդիկատի մասին սարքած հեքիաթը նոյնքան անմիտ և յիմար է, ինչպէս այն մեղադրանքը, թէ հրէաները մարդկային արիւն են գործ ածում: Հրէաները երբեք չեն միանում իրանց ոճրագործներին պաշտպանելու համար: Ոչ ոք չէ դատաւարարում հրէայ ոճրագործին աւելի խիստ, ոչ ոք իրանից չէ հեռացնում ոճրագործին այնպէս, ինչպէս հրէաները: Մեր լինումներն մեթոք մեզ վրդովեցնում է, որովհետեւ նրանք հրէական ազգը պատասխանատու են դարձնում մի անհատի գործի համար: Իրէֆուսի գործով հրէաները հետաքրքրվեցան միայն այն ժամանակ, երբ հակառակմանը նրանք մի գործից դարձին հրէաների դէմ: Իրաւունքի խանգարման դէմ կռվելու պատիւը պատկանում է քրիստոնեաներին: Հրէաների վրա ըն-

է միւս բանի մի գիւղերին բաժին եղած ջրի: Իսկ որքան Վաղարշապատի ջրի հաւասար կէսն տէրն է վանքը: Ամեն տարի վանքը ամիսներով իր մեծ բաժին ջուրը՝ բացի այդինքն յատկացրածից, թողնում է գիւղացիների շահեցողութեան: Այս տարի ևս անցեալ տարիների նման անտառին հասանելի ջուրը ինքնայոժար տուեց գիւղացիներին՝ իրանց բամբակները ջրելու: Այդ ժամանակ, որպէս զի անտառի մատարդառնակ ծառերը չը չորանան, լճակի ջուրը բաց թողնելուց անտառի վրա, գրկելով միաբանութիւնը յուրիս չոգերին լճակի գովաբար սիրովանքից: Գիւղացիները բաւական չը համարելով այն ջուրը՝ յանդգնում են գիւղերով գողանալ անտառի վրա թողած լճակի ջուրը և տանել իրանց բամբակի վրա՝ վնասելով անտառի չրջապատ թումբերին, որի մասին կազմվում է արձանագրութիւն և յանձնվում արգելանք սինթիլ տնօրէնութեան: Այդ բաւական չէ, ուրիշ մի անարդարութիւն էլ են գործ դնում նրանք, «սառը քանքան» ասված աղբիւրի ջուրը, որ վանքի սեփական է և ամառնային տոթիւղին օրերում թողնվում է վանքի հեռաւոր արտատեղին գնալու՝ անտառների և մշակների խմելու համար, այն ևս կորում են և իրանց բամբակների վրա անում՝ զրկելով հաղարարող անտառների և հարկւարաւոր մշակներ խմելու ջրից անցում: Արդ՝ ինչ անէ այս հանգամանքում: Արեւիկա արքեպիսկոպոսը, որ պարտական է վանքի անտառի և պարտէզների պահպանութեան վրա հոգալ, երբ բանաւոր յորդանները չեն աղբում իրաւունքը չը յարգող ինտելիգենցիան: Մերթաւին դատաւարների ենթարկեց՝ պատուիրելով վանքի ազարակի կառավարչի օգնականին «սառը քանքանի» ջուրը ոչ ոքի չը տալ, այլ միայն անտառների և մշակների բաւականութեան համար տանել արտատեղին: Իսկ նրանք, որոնք մէջ են և ջրի գողներ, եթէ կը կամենան օգտվել այն ջրից՝ լինող իրեն տուգանք իւրաքանչիւր ստարաւորների համար վճարեն մի ռուբլի և ապա ջուր ստանան: Ընդամենը՝ չինո մարդուց տան և վեց ռուբլի է ստացվում և որոշված է այդ փողը բարեգործական ընկերութեան այտուեղի ծիւղին ուղարկել: Ան այն է հաւատարմ իրողութիւնը, որ խոսքում ենք իբրեւ պատասխան, ազարակը «Մշակի» մօտաւոր համարներից մէկում:

Քարտուղար վանական կառավարութեան
Յուր Զանիբէկեանց

ՆԱՄԱԿ ԽՐԱԿՐԻՈՒԹԱՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 1-ին
Թիֆլիսում «Մշակի» միջոցով յայտնել հետեւեալը: Օգոստոսի 20-ին վախճանված դերասան Դաւիթ Փարեանի յուղարկութեան և թաղման համար՝ մի խումբ ընկերներով, հաւաքեցինք 163 ռ. 50 կօպ: Այս գումարը՝ ծախված է 126 ռ. 11 կօ, որը դուրս գալով՝ մնացած 37 ռ. 39 կօպէ կը յանձնվեց հանգուցեալի այրելին: Սրա հետ միասին ներփակված ներկայացնում ենք խմբագրութեանը նուիրատու անձերի անուանացուցակը:

Սեղրակ Պոյաճեան

կած է դէպի այդ գործը ցոյց տված անտարբեր վերաբերմունքի արատը: Սիւնիզի մաղեցութիւնը հրէութեան վրա յիշեցնում է այն ազդեցութիւնը, որ անում են արեգակի դարձա՛նային առաջին ճառագայթները մեռած դաշտի վրա, որ ծածկված է ձիւնի սաւանդով: Սրան ևս գալիս առաջին թիւրմ ծիւղերը, բայց չորս կողմում դեռ անանցանելի ցեխ է: Բոլոր վատ փողով բոլորը դուրս են լողում մակերևոյթի վրա: Բայց մենք նայում ենք օրացոյցին և հանգստանում ենք: Փարուր մօտ է: Սիւնիզի դարձեցնում է հրէութիւնը՝ մի նոր կեանք սկսեցնելու, բայց նա նոյնպէս առաջացնում է մի բաժանում կենդանիների և մեռածների մէջ: Այժմ միայն մենք կարող ենք դիտել այն սոսկալի աւերումները, որ գործել են երկու հազար տարվայ թափառումներն ու ստրկութիւնը: Մարմնաշիւղ յետոյ այս առաջին անգամն է, որ մենք կարող ենք ցոյց տալ աշխարհին, թէ մեր մէջ դեռ կենդանի ուժ կայ: Մեզ կը դիմադրեն: Այն հրէաները՝ որոնք մենք թող չենք տալիս ընդ, վրդովված են սիւնիզիայի: Մի և նոյնը տեղի ունէր և Սերասի ու Նեֆթիլի ժամանակ: Լաւագոյն փորձաքննութիւնը կռվում էր ժողովրդի վերածնութեան համար, մենք այդ փորձաքննութեան ժառանգներն ենք: Սիւնիզի մէջ է հրէական վերածնութիւնը: Սիւնիզի մէջ հրէայ հակառակորդները դատաւարարված են կորստի, որպէս նրանք Սիւնիզիաները կուսակցութիւն չեն, նրանք հրէութիւնն են: (Աղմը կալի հաւանութիւններ):

Ժողովի երկրորդ օրը, նախագահը բաց անելով նիստը, յայտնեց, որ մինչև այդ 400 հեռադրներ են ստացվել ժողովրդական մասսաներից, զանազան ընկերութիւններից, այլ և բազմաթիւ նամակներ: Փրանսիացի ժողովրդատ Դէլին-Ալիկանովի կարգում է ուսաց կառավարութեան շրջաբերականը ընդհանուր գինեթափութեան մասին: Այդ բանը բերկրութեան յուղումն է տարածում ժողովի մէջ: Նախա-

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՌԵՐ

Մեզ հաղորդում են, որ նախկին հայոց դպրոցների վարժուհիներից և ուսուցիչներից շատերը, որոնք ց են գ ունեն, խնդրեց են տալիս կառավարչական դպրոցների դերեկցիային՝ խնդրելով իրանց պաշտօն տալ բացվելի հայոց ծրարական դպրոցներում:

Վովկասին վերաբերեալ մի բանի խնդիրների ուսումնասիրութեան համար Վովկաս են եկել երկրագործութեան և ֆինանսների միւնիստրութեան պալատիներ, մի բանին էլ պէտք է զան սեպտեմբեր ամսի ընթացքում: Յիշե՛ք նըրանցից մի բանին: Իշխան Մասալսկի՝ երկրագործութեան միւնիստրութեան յանձնարարութեամբ՝ ուսումնասիրում է Վովկասի փորձնական կայարանները և օրինակելի ազարակները: Նա արդէն եղել է արեւմտեան Վովկասում, այցելել է Սակարի տնկարան և այժմ դիտել է Վարպեազի կայարանը տեսնելու: Պօստալի ըր ու մի նոյն միւնիստրութեան կողմից ուղարկված է Վովկասի անալիզագործութեան դարգացնելու միջոցները մշակելու նպատակով: Նա եղել է Թիֆլիսում, այժմ դիտել է Բաթում: Արեւմտեան Վովկասի տնայնագործութիւնը դիտելուց յետոյ նա կը վերադառնայ Թիֆլիս, ուր նա տեղական մասնագէտների հետ միասին կը վերջացնի իր յանձնարարութիւնը: Պրոֆեսոր Կօկուսաւ մի արդէն այցելել է Վովկասի նշանաւոր մասերը և ուսումնասիրել է հողերի մակերեսային մասի որակութիւնը: Ս. Գուշկի շա մարտի ֆինանսների միւնիստրութեան յանձնարարութեամբ՝ ճանապարհորդում է Վովկասի շրջանում՝ պարզելու այն միջոցները, որոնցով կարելի է բարձրել և զարգացնել նաւթային արդիւնների տեղափոխութիւնը: Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, Վովկաս է գալու և առևտրի դեպարտամենտի դերեկտոր Վօվալսկի վսկի՝ պարապմունքի հարկ մտցնելու պայմանները պարզելու նպատակով:

Երեկ «НОВОЕ ОБОЗРЕНИЕ» լրագիրը հաղորդեց, որ ներքին գործերի միւնիստրութիւնը թողաւորել է ամենայն հայոց Վաթիկիսիսի դիմել դատարանական իշխանութիւններին բողոք այն դէպքերում, երբ Նորին Վեհափառութեան կարծիքով, ժողովրդական լուսաւորութեան միւնիստրութեան պաշտօնները դրաւած կը լինեն այնպիսի եկեղեցական կառավարներ, որոնք չեն պատկանում փակված հայոց եկեղեցական ծիական դպրոցներին: Ռուս լրագրի այդ լուրը մի փոքր տարօրինակ է: Վովկասեան ուսումնասիրական վարչութեան հրատարակած պաշտօնական կարգադրութեան մէջ արդէն հաղորդ-

ված է ձեռքը մատնացող է անում, որ ուսաց Վայսրի ծրարները բարձր-իդէալական և շատ մարդասիրական է և սիւնիզիաները, որոնք նոյնպիսի խաղաղ նպատակների են հետևում, չեն կարող անտարբեր մնալ դէպի այդ երևոյթը: Մաքս-Նորդաու նկատում է, որ ուսաց Ինքնակալի ինքնատիւր ունի համաշարային միանում է այդ յայտարարութիւններին՝ աղմը կալի ծափահարութիւններով և ուրախ աղաղակներով:

Կիւիլից եկած պրոֆեսոր Մանդէլտամ կարգաց թէֆէրատ սիւնիզի մարդի մասին: Նա նայում է հրէայ ժողովրդին, որպէս բոլորովին հիւանդ մի օրգանիզմ վրա, որ տանջվում է լոյսի, օդի և բաւարար անուղի բացակայութեան պատճառով: Քժշկութեան մեթոդները, որոնք գործադրվում էին մինչև այժմ—ձուլում և մկրտութիւն—բաւարար չէին Միայն մեր մեթոդը, որ հիմնված է 2,000 տարվայ փորձի վրա—քժշկութիւն սիւնիզիզմ—կառաջացնի ապաքինում: Հրէաները ոչ միայն կրօնական համայնք են, այլ և ազգ, եթէ մինչև անգամ նըրանց ազգայնական դրացմունքը դեռ բաւարար չափով չարտայայտվէ իսկ: Հրէասիրութիւնը գոյութիւն ունի և կուսենայ: Հրէական հարցը—ժողովրդական չարք է: Բայց այն յոյսերը, թէ սոցիալական հարցը վճելու հետ կը վճվի և հրէական հարցը, ոչինչ հիմք չունեն: Սիւնիզիզմ ուղում է պահպանել հրէաներին իբրև ազգութիւն և կորստից ազատել հրէաների մեծ մասը, որոնք տանջվում են անտեսական ամենատուրկալի պայմաններից: Մենք յոյս ունենք մեզ վրա և բոլոր ազնիւ քրիստոնեաների վրա, որոնք պիտի մեզ օգնութեան գան: Մենք ցանկանում ենք սեփական երկրի, հող, հողի հետ, ինչպէս միւս ազգերը: Ամենից առաջ պէտք է եւանդով հոգս տանել ժողովրդի ներքին կըրթութեան և ազգային ինքնաճանաչութեան բարձրացնելու մասին: Հրէան պիտի դադարէ իր

ված էր, որ համաձայն Բարձրագոյն որոշման, դպրոցական գոյերի համար դատարանի միջոցով կարող են պահանջ սկսել թէ հայոց հոգևոր իշխանութիւնը և թէ նոյն իսկ մասնաւոր մարդիկ:

Ժողովրդական լուսաւորութեան միւնիստրը կարգադրել է, որ դիմադրանքների և բէալական դպրոցների ստորին դատարաններում ֆրանսիական լեզուի դաստաւորութիւնը կարող է յանձնըվել նաև կանանց, եթէ նրանք ունենան որոշված ցենզ:

Բնագէտների Տ-րդ ժողովի ստատիստիկական բաժնում Ա. Բորինիզի կարգաց մի զեկուցում, որի մէջ ապացուցանում է, որ բաղաճները կարող են այժմանից մոցնել ընդհանուր գըրադի տական ուսում թէ տղաների և թէ աղջիկների համար: Բորինիզի եօթ տարի շարունակ ուսումնասիրել է Օդեսայի դպրոցները և համեմատել ուրիշ բաղաճների դպրոցներին: Նրա կարծիքով տարրական դպրոցներում չը պէտք է ընդունել ութ տարեկանից փոքր մանուկներին և ուսումը պէտք է շարունակել ընդամենը երեք տարի: Քաղաքները իրանց միջոցներով կարող են պահել մանուկների միայն 60%, իսկ մնացած 40% համար պէտք է հոգա պետութիւնը, որի պարտքն է կապակերպել ժողովրդական լուսաւորութեան գործը: Այդ 40%-ի կրթութիւնը հոգալով կարելի կը լինի ընդհանուր կրթութեան սկզբունքը մոցնել բաղաճներում, որից յետոյ հերթական կը դառնայ և պետութեան ամբողջ տարածութեան վրա գրադիտութիւն մոցնելը:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Զիգրաշէն կոչված եկեղեցու բակում գտնվող հայոց ծիական դպրոցը մոնելու համար այս տարի բաւարար լին խնդիրներ տրվեցին, բայց շատերը մերժեցին: Իսկ չը լինելու պատճառով Այդ դպրոցը բացված է անցեալ տարեկանից:

Բարձրագոյն հրամանով թող է տրված, որ երկաթուղային վարչութիւնները փոխարինարար փող բաց թողնեն կառուածաւորներին՝ գրաւ վերցնելով հայի պաշարներ: Այդ արտօնութիւնը ոչ թէ կուսենայ մինչև առաջիկայ 1899 թի յուլիսի 1-ը: Փոխաւորութեան այդ ձեւ յարմարութիւններ է տալիս կառուածաւորներին հեշտ կերպով փող ձեւը բերել և ընթացիկ ծախսերը հոգալ:

ԳՕՐՈՒ գաւառի Ախալքալաք գիւղից մեզ գրում են. «Օգոստոսի 30-ին այտուեղ եկաւ կառավարչական դպրոցների տեսուչ Բողաւոյ և

ժաղովից ամաչելուց: Այդ կրթական աշխատութիւնը պէտք է յարմարեցնել զանազան երկրների պայմաններին:

Ճաշից յետոյ եղած նիստում նախագահը յայտնեց, որ առաւօտից դարձեալ բաղմաթիւ հեռագրներ են ստացվել և կարդում է Չեզարէ Լօմբրօզի ուղարկած ջերմ ողջոյնը: Խաղաղի դիտանական ներդրութիւն է խնդրում, որ չը կարողացաւ անձամբ ներկայ լինել ժողովին: Արեւից եկած Մօցկին մի երկար զեկուցում է կարդում հրէական այն կօրծիւնների մասին, որոնք արդէն գտնվում են Պալեստինայում: Նա ասում է, որ զաղթականութիւնն այդ երկրում ունի շատ պակասաւոր կողմեր և մեղադրում է Բօտչիլի կառավարչներին, որոնք հովանաւորող սիւնիզմին են հետևում: Ինքը՝ Բօտչիլի, ջերմապէս նուիրված է Պալեստինայում գաղթականութիւններ հիմնելու գործին, բայց իր գործակաւորներին արածը չէ տեսնում և թէ չը շուտ-շուտ այցելում է Պալեստինա, բայց տեսնում է միայն արտաքին կողմը: Այնու ամենայնիւ հրէական զաղթականութիւնները շատ են հոգս տանում իրանց մոտաւոր շահերի մասին: Նրանք կուտուրայի կողմից բարձր են կանգնած և երկրի մէջ լոյս են տնցնում: Շատ կօրծիւններ մէջ կան նոյն իսկ թատրօններ և տրվում են կօնցէրտներ: Մանաւանդ լաւ է ազգային դպրոցը Եաֆայում: Հրէական լեզուն Պալեստինայում կենդանութիւն է ստացել: Դա փաստ է:

Ժողովը, բաղմաթիւ վիճաւորութիւններից յետոյ, ընդունեց զաղթականական յանձնաժողովի մշակած ծրարքը: Վճուված է կօրծիւններ հիմնել Պալեստինայում և Սիրիայում թիւրքաց սուլթանից թոյլտւութիւն ստանալուց յետոյ: Այդ նպատակով կազմված է մի յանձնաժողով, որ պիտի գտնվի Լօնդօնում: Մասնաժողովին պիտի աշակցէ զաղթականական բանկը, որ հիմնվում է յատկապէս այդ նպատակով և պիտի ունենայ հիմնական դրամաւորութիւն 50,000,000

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13